

25.725

ՀՐԱՏ. ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ



ՍՊԱՌՈՂԻ

ՀԱՒԱՏԱՄՔԸ

334

F-58

1030

118. 64

05 JAN 2010


171

300

1181-R6

10

17 .811



Handwritten text at the bottom of the illustration, possibly a signature or title.

334  
P-58


# ՄՊԱՌՈՂԻ ՀԱԻԱՏԱՄՔԸ

Լ. ԲԵՐՏԻԱՆ



Մի պատկերով

Թարգմ. ֆրանսերէնից



Գործարանատէր

Մեծավաճառ

Միջնորդ

Մանրավաճառ

Սպառող

Իրան բժ. Ա. Բուրուզեանի.

Սպառողի զրույթիւնը

1808  
371313993

Ս.-ՊԵՏԵՐԱՌՈՒՐԳ

«ԳՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻԳ», ՍԱՅԿԻՆ ՓՈՂ. 10

1909



## Յ Ա Ռ Ա Չ Ա Ր Ա Ն

Կօօպերացիան (սպառողական ընկերութիւնը) հսկայական գործօն է, մեծ ոյժ՝ խաղաղ զարգացման. կօօպերացիա — դա ինքնօգնութիւն է:

Մեր գիւղացին կարիք ունի հողի, փողի և կրթութեան, հողը պարարտացնելու և մշակելու գիտելիքների:

Գիւղացուն անհրաժեշտ է ինքնօգնութիւն:

Ուստի նա սպառողական ընկերութիւններ պիտի կազմէ, այլ խօսքով հիմնէ վարկային և փոխատու ընկերութիւններ, սպառողական կրպակներ, գիւղատնտեսական ընկերութիւններ \*):

Կօօպերացիայի հիմքը — տիրոջ բացակայութիւնն է. այստեղ չկայ կապիտալիստ խօզէին կամ չինովնիկ. ընկերութեան բոլոր անդամները նրա տէրն են հանդիսանում:

Կօօպերացիայի ասպարիզում աշխատանքը ոչ թէ կապիտալի օգտին է գնում, այլ անդամ-

\*) Տես մեր հրատարակ. գիրքը՝ «Գիւղատնտեսական ընկերութիւններ»:

ների սեփական օգտին, յօգուտ հասարակութեան:

Որտեղ կօօպերացիա չկայ, այնտեղ կեանք էլ չկայ, մանաւանդ գիւղերում, ինչպէս մեզանում: Կօօպերացիան պարունակում է գեմատուօյի գաղափարի շատ մտքեր. գեմատուօյի՝ որ մեզանում դեռ ևս չկայ և յայտնի էլ չի, երբ կլինի:

Ընթերցողների ուշադրութեան առաջարկւած «Սպառողի հաւատամքը» բրոշիւրի հեղինակը Լուի Բերտրան կօօպերացիայի լաւագոյն գիտուններից և համոզւած քարոզիչներից մէկն է հանդիսանում:

Նա ունի երկհատոր աշխատութիւն Բելգիական կօօպերացիայի պատմութեան մասին, մի քանի հանրամատչելի բրոշիւրներ, նա է խմբագրում նաև բելգիական կօօպերատիւ ընկերութիւնների օրգանը:

Ծագմամբ բանւոր՝ Բերտրանը Բելգիայի բանւորական կուսակցութեան պարագլուխներից մէկն է հանդիսանում ներկայումս:

Ինքը պարլամենտի անդամ լինելով, քաղաքազիտութեամբ պակաս է հետաքրքրուում, քան կօօպերացիայով, որի ոգևորւած առաքեալներից մէկն է եղել:

Կօօպերացիան կըբուժէ մեր հասարակութեանը ամեն կողմից՝ տնտեսական, բարոյական և ֆիզիքական:

Կօօպերացիան, բացի բարոյագիտական և դաստիարակչական նշանակութիւնը, որ յատուկ

է նման կազմակերպութեան՝ իբրև համերաշխութեան դպրոցի, նա յառաջադիմական է և դիմուկրատիկ նաև նրանով, որ չի հիմնւած քշերի զոհողութիւնների և բարեգործութեան վրայ:

Փոխադարձ օգնութեամբ առաջ է գալիս ոչ միայն նիւթական, այլ և հոգևոր բարիքներ յօգուտ բոլորի:

Կօօպերացիայի սկզբունքը ժողովրդական բարեկեցութեան կարևոր պայմաններից մէկն է կազմուած և աշխատաւորների խաղաղ կազմակերպման ամենանպատակայարմար միջոցներից մէկն է հանդիսանում:

Չմոռանանք, որ կօօպերացիան այն միակ չեղօք ասպարէզն է, որտեղ կարող են աշխատել տարբեր կուսակցութիւնների անձեր, էսպէս նա անկուսակցական է, որովհետև ամբողջ ժողովրդին է և ոչ թէ նրա առանձին խմբերինը:

Կարելի է նոյն իսկ պնդել, որ անկուսակցական կօօպերացիան աւելի է համապատասխանում գոնէ այն կուսակցութիւններին, որոնք անկեղծօրէն են ձգտում իրականութեան աւելի լաւագոյն ապագայի օրեկտիւ գաղափարներին:

Կօօպերացիան, աւելացնելով մասնակիցների բարեկեցութիւնը, կատարելագործում է նրանց բարոյական բնոյթն ու դաստիարակում է նրանց մէջ հասարակականութեան բարձրագոյն ձևերի գաղափարը:

Կօօպերատիւ գործունէութիւնը ստիպում է մտրդուն ուշադրութիւն դարձնել իր վրայ, իր

ներքին աշխարհի, իր բնաւորութեան թերութիւնների վրայ, նրանում ձգտումն է առաջացնում իրան վերակրթելու և անտարակուսելի կերպով համոզում, որ հասարակական յառաջադիմութեան զրաւականը մարդկային բնութեան բարելաւումն է:

Եւ քանի աւելի են վարժուում ուրիշների բարիքի մասին մտածելու, այնքան սակաւ ենք զբաղուում մեր անձով և «ես» ու «իմ» խօսքերը հետզհետէ դառնում են «մենք» և «մեր»:

Եղբայրական միութեան մէջ է ոյժն ու բազմութիւնը:

ԲՃ. Ա. ԲՈՒՂՈՒՂԱՆ

1 հոյեմբերի 1908 թ.  
Ս.-Պետերբուրգ:

## ՍՊԱՌՈՂԻ ՀԱՒԱՏԱՄՔԸ

ԱՌԱՋԻՆ ԳԱՍ

Սպառողը՝ Նորա վնասները մասնաւոր վաճառականներից, Գործակցկութիւն (կօօպերասիօն): Ինչպէս է ծագել և զարգացել այդ միտքը:

- Հարց. — Բարեկամ-ընթերցող, ո՞վ ես դու:  
Պատասխան. — Ես սպառող եմ, այսինքն ողջ աշխարհն, որովհետեւ ապրելու համար բոլորը պէտք է ուտեն ու խմեն:
- Հ. — Եթէ դու ողջ աշխարհն ես, ուրեմն դ՞ու ես և բարձրագոյն թագաւորը:
- Պ. — Ընդհակառակը, ես մի գերի եմ, որին շահագործում են: Իմ տէրերն են այն վաճառականները և այն միջնորդները, որ գտնուում են արդիւնաբերողի և սպառողի մէջ:
- Հ. — Ինչի՞ց ես տրտնչում:
- Պ. — Ես տրտնչում եմ վաճառականութեան չարիքների դէմ, այն վաճառականութեան, որը հիմնւած է նախ և առաջ ի նպաստ այն մարդու, որը նրան գործադրում է և որը մի ը-

պէ անզամ չի մտածում սպառողի առողջութեան կամ նորա զբօսանի մասին:

- Հ. — Ո՞րոնք են այդ չարիքները:
- Պ. — Նոքա բազմաթիւ են: Առաջինը՝ զները շատ է չափազանցրած: Մի բան որ առնւած է մի ըուբլով՝ երկուսով է ծախուում սպառողին:
- Հ. — Մի՞թէ դա կարելի բան է:
- Պ. — Այո՛, դա կարելի է, որովհետեւ մի մթերք՝ նախ քան սպառողին հասնելը, անցնում է մի շարք միջնորդների ձեռքով:
- Հ. — Արդեօք չափազանցրած չէ՞ միջնորդների թիւը:
- Պ. — 1900 թ. վիճակագրութեան համաձայն Բէլգիայում 385.000 մարդ զբաղւած է վաճառականական արհեստով:
- Հ. — Ո՞ր վաճառականներն աւելի բազմաթիւ են:
- Պ. — Բազմաթիւ են այն վաճառականները, որ զբաղւած են բնակարանի և սնունդի հարցով:
- Հ. — Ո՞րքանի կրհասնի նոցա թիւը:
- Պ. — Թիւը շատ մեծ է, կրհասնի մինչև 264.300:
- Հ. — Թւի մեծութիւնը արդեօք առաւելութիւն չէ՞, աչքի առաջ ունենալով վաճառականների մէջ եղած մրցումը:
- Պ. — Ամենեին ոչ:
- Հ. — Բայց ինչո՞ւ:
- Պ. — Ահա թէ ինչու: Եթէ մի գիւղում, որտեղ մի վաճառական բաւական է, կան տասը, այն ժամանակ սպառողներն են տուժում. նոքա պէտք է վճարեն տասը տան վարձ, տասը հարկ: Նոքա ստիպւած են հողալ տասը գեր-

դաստանի պէտքեր, որովհետեւ այդ տասը գերդաստանը ապրում է այն օգտով, որ կազմուած է արհեստապէս թանգացրած գներից:

- Հ. — Ո՞րոնք են վաճառականութեան միւս չարիքները:
- Պ. — Կան խարդախութիւններ:
- Հ. — Ի՞նչպիսի խարդախութիւններ:
- Պ. — Վաճառել ապրանքը պակաս քաշով:
- Հ. — Ցոյց տւէք օրինակը:
- Պ. — Նախ՝ հացը, որի քաշը Ֆունտից քիչ է, ծախել Ֆունտի տեղ:
- Հ. — Դա բոյձո՞ւն է:
- Պ. — Ո՛չ, կան և ուրիշ ապրանքներ. ածուխը, որի քաշը շատ փոփոխական է:
- Հ. — Այդ խարդախութիւնը՝ ծախել ապրանքը պակաս կշռով, արդեօք եզակի՞ է:
- Պ. — Ո՛չ, կան և ուրիշ խարդախութիւններ. օրինակի համար, կեղծում են ապրանքը:
- Հ. — Ցոյց տւէք օրինակը:
- Պ. — Բրդեղէն կտորեղէնները ծախում են իբրև բամբակից հիւսւած ապրանք, կաթը կէս ջրախառն, ալիւրը թեփով խառն, պղպեղը մի տեսակ փոշով, որը ոչինչ չարժէ, իւրը հարպով կամ մեծ քանակութեամբ ջրով խառնւած:
- Հ. — Այդ խարդախութիւնները ընդհանուր են արդեօք:
- Պ. — Ամստերդամ քաղաքում գոյութիւն ունի «Միջազգային Հանդէս Ծախսիֆիկացիաների (կեղ-

Ճուճների)» (Revue internationale des falsifications), որը ամեն ամիս ցոյց է տալիս անթիւ գէպքեր այգպիտի կեղծիքների բոլոր երկրներում:

- Հ. — Մի՞թէ չկան աղնիւ վաճառականներ:
- Պ. — Այո՛, կան, բայց մրցումը և օգտուելու անչափ ցանկութիւնը մղում են նրանց կեղծել մթերքները և ծախել ապրանքը պակաս կշռով:
- Հ. — Բայց դատաստանը:
- Պ. — Դատաստանը առհասարակ խիստ չէ գէպի անաղնիւ մարդիկ:
- Հ. — Ո՞րն է ամենալաւ միջոցը, որ մեզ չբկողոպտեն և չբշահագործեն:
- Պ. — Ամենալաւ միջոցը, կամ միակ լաւ միջոցն այն է՝ որ ինքը սպառողը դառնայ վաճառական:
- Հ. — Բայց ի՞նչպէս:
- Պ. — Հիմնելով միւս սպառողների հետ գործակցական ընկերութիւն, որը չի ունենայ ոչ մի շահ կեղծել կամ ծախել ապրանքը պակաս քաշով, երկրորդ կամ երրորդ կարգի ապրանքը ամենալաւի տեղ առաջարկել դնողին: Մի խօսքով, սպառողները, դառնալով ինքնազուրկ վաճառական, կրխաբւին միայն այն գէպքում, եթէ կրվարւին ինչպէս որոշ վաճառականներ:
- Հ. — Ի՞նչ կրնանակէ գործակցութիւն բառը:
- Պ. — Գործակցութիւն բառը առաջ է եկած գործակցել խօսքից, որը նշանակում է աշխատել միասին ընդհանուր նպատակի հասնելու համար:

- Հ. — Ի՞նչ ընդհանուր նպատակ ունին գործակցները:
- Պ. — Նոցա անմիջական նպատակն է ապրել աժան գնով և յետոյ ստեղծել տնտեսական կեանքի նոր պայման:
- Հ. — Ի՞նչպէս են գործում նորա:
- Պ. — Նորա գործում են՝ հիմնելով ընկերութիւններ գործակցական սկզբունքի վերայ:
- Հ. — Գովելի՞ են արդեօք այդ տեսակ ընկերութիւնները:
- Պ. — Շատ և շատ գովելի են: Նորա նոյնպէս բեղմնաւոր են այն մտքով, որ զարգացնում են ընկերակցութեան, համերաշխութեան և պատասխանատուութեան ոգին, դաստիարակում են ժողովրդին թէ բարոյապէս, թէ տրնտեսապէս, իսկ առանց դորան անկարելի է բարելաւել մարդկութեան զրութիւնը:
- Հ. — Արդեօք գոյութիւն ունե՞ն զանազան կարգի գործակցական ընկերութիւններ:
- Պ. — Այո՛, կան զանազան տեսակ ընկերութիւններ:
- Հ. — Ո՞րոնք են:
- Պ. — Կան նախ սպառողական ընկերութիւններ, արդիւնաբերութեան և աշխատանքի ընկերութիւն, վարկի ընկերութիւն, ապահովագրութեան՝ կեանքի, հրդեհի դէմ և այլն, առ ու ծախսի ընկերութիւններ համայնքի մէջ, երկրագործական ընկերութիւններ, որոնք ունին կաթնարաններ, գնում են սերմ, հունդ և այլն: Կան վերջապէս ընկերութիւններ, որ

հիմնել են իրենք վաճառականները իրանց մէջ  
և նպատակ են դրել գնել կամ արտադրել  
միասին աչն, ինչ որ ծախելու են:

Հ. — Ո՞ր տեսակ գործակցութիւնը ամենից շատ  
է զարգացած:

Պ. — Գրեթէ բոլոր երկրներում ամենից շատ  
զարգացած է սպառողական ընկերութիւնը:

Հ. — Ի՞նչն է պատճառը:

Պ. — Դա հետեանք է աչն չարագործութիւնների,  
որ մենք տեսանք և որը հիմնւած է միաչն  
ծախողի անձնական օգտի վրայ:

Հ. — Ի՞նչ ծագում ունի գործակցական շարժումը:

Պ. — Գործակցական շարժման ծագումը սոցիա-  
լական է:

Հ. — Տնտեսական ընկերութիւններն էլ միեւնոյնը  
չէ՞ն, ինչ որ գործակցականները:

Պ. — Տնտեսական ընկերութիւնները ոչ մի կապ  
չունին գործակցութեան հետ:

Հ. — Ինչո՞ւ:

Պ. — Որովհետեւ այդ ընկերութիւնները բաւակա-  
նանում են ծախելով ամենացած գնով և աչքի  
առաջ ունին միաչն անմիջական օգուտը:

Հ. — Է՞լ ինչու:

Պ. — Որովհետեւ տնտեսական ընկերութիւնները  
ոչ մի սոցիալական բնաւորութիւն չունին.  
նոքա ոչ մի զոհաբերութիւն չեն անի դաս-  
տիարակելու կամ կրթելու իրանց համախոհ-  
ներին, նոքա չեն աշխատիլ նոքա դրու թիւնը  
թեթեւացնելու:

Հ. — Ի՞նչ է սպառողի պարտականութիւնը, որը  
հետամուտ է իր առողջութեանը և իր օգտին:

Պ. — Սպառողը, որ հետամուտ է իր առողջու-  
թեանը և իր օգտին, պարտական է որքան  
կարելի է շուտ հիմնել սպառողական ընկերու-  
թիւններ:

Այսպէս վարուելով՝ նա խնամք կը տանէ  
իր գերդաստանի, իր երեխայոց ապագայի  
մասին, կաշխատի բարելաւել շատ շատերի  
վիճակը:

### ԵՐԿՐՈՐԳ ԳՁՍ

Կօօպերացիայի զարգացումը. — Նիւթական առաւելու-  
թիւնները:

Հ. — Շնորհ է տարածուած կօօպերատիւ շար-  
ժումը:

Պ. — Կօօպերատիւ շարժումը խիստ մեծ չափով  
տարածեց Եւրոպայի մեծ մասում, յատկա-  
պէս վերջին քսան և հինգ տարուայ ընթաց-  
քում:

Հ. — Ամենից աւելի նա ճրտեղ է զօրեղ:

Պ. — Անգլիայում:

Հ. — Թուեր բերէք:

Պ. Մեծ-Բրիտանիայում կայ մօտ 2 միլլիոն կօօպե-  
րատտ, որոնք ընտանիքի զլուխ են. նրանց  
կօօպերատիւ ընկերութիւնների զըրամազլուխը

հասնում է 880 միլիոն ֆրանկի (ֆրանկը մօտաւորապէս 37 կոպէկ):

Հ. — Անգլիական այդ կօօպերատիւների տարեկան ընդհանուր շրջանառութեան գումարը ձրքանի է հասնում:

Պ. — Վերջին շրջանառութեան ընդհանուր գումարը հասնում էր մօտ երկու միլիարդ ֆրանկի:

Հ. — Անգլիայի կօօպերատիւներում ձրքան ձառայող կայ:

Պ. — Նրանց թիւը հասնում է 54.000-ի:

Հ. — Իսկ արդիւնաբերող կօօպերատիւներում ձրքան:

Պ. — Մեծ Բրիտանիայի արդիւնաբերող կօօպերատիւներում կան 27.000 ձառայող և բանուոր:

Հ. — Ամէն պետութեան մէջ ևս կօօպերատիւներ գոյութիւն ունեն:

Պ. — Այո, եւրոպական բոլոր պետութիւնների մէջ. մինչև անգամ Ռուսաստանում գոյութիւն ունեն կօօպերատիւներ. նրանք կան և Աւստրալիայում, Ճափոնիայում, Հնդկաստանում, Կանադայում, Անտիլեան կղզիներում:

Հ. — Ո՞րն է ամենամեծ սպառող կօօպերատիւը:

Պ. — Ամենախոշոր կօօպերատիւը գտնուում է Լիդսում (Անգլիայում). նա ունի 50.000 անդամ և տարեկան 38 միլիոնից աւելի շրջանառութիւն է անում:

Հ. — Իսկ Գերմանիայում:

Պ. — Գերմանիայում, Բրեսլաւում գոյութիւն ունի մի սպառող կօօպերատիւ, որ ունի 87.000 անդամ և 1905 թուին վաճառել է 32 միլիոն ֆրանկի ապրանք:

Հ. — Իսկ Բէլգիայում:

Պ. — Բէլգիայում, իբրև ամենագորեղ կազմակերպութիւն ներկայանում է Բրիւսսէլում «Ժողովրդական Տունը». նա ունի մինչև 20.000 անդամ (ընտանիքի գլուխ) և տարեկան 5 միլիոն ֆրանկի շրջանառութիւն է անում: Նրանից յետոյ, երկրորդ տեղը բռնում է «Պրոզրէս» (Յառաջադիմութիւն)՝ ժողիմոն քաղաքում, 11.000 անդամով. երրորդ տեղը բռնում է «Վօօրիւ-ի» Գան քաղաքում 7.000 անդամով և այլն:

Հ. — Իսկ գիւղերում:

Պ. — Գիւղերում սկսում են տարածել սպառող կօօպերացիաներ: Բէլգիայում մինչև անգամ մի շէն կայ, որտեղ ոչ մի առևտրական չկայ: Կօօպերատիւն ամեն ինչ մատակարարում է իւր բնակիչներին՝ մինչև անգամ քահանայ:

Հ. — Ո՞րն է այդ շէնը:

Պ. — Այդ շէնը կոչւում է Փեղ-Փոնտէն, Գիւի շրջանում. համայնքը ունի 750 բնակիչ:

Հ. — Ո՞ր ժամանակից գոյութիւն ունի այդ կօօպերատիւը:

Պ. — Փեղ-Փոնտէնում, 1891 թուի ապրիլ ամսին հիմնուեց «Ապաղայ» անունով կօօպերատիւը. այդ թուին նրա մուտքը եղաւ 33.000 ֆրանկ,

որից արդիւնք՝ 2.340 ֆրանկ: Այժմ նրա տարեկան շրջանառութիւնն անցնում է 80.000 ֆրանկից, այսինքն իւրաքանչիւր բնակչի ընկնում է տարեկան 100 ֆր. աւելի, կամ իւրաքանչիւր ընտանիքի 500 ֆրանկ:

Հ. — Ի՞նչ նպատակի են ծառայում կոօպերատորները:

Պ. — Կօօպերատորները ձգտում են վերացնել աշխատանք՝ օգուտ առաւարտ:

Հ. — Այդ արդար բան է:

Պ. — Անտարակոյս. իրր կամ առարկան արժէ այնքան, որքանի նիւթ է բանեցրած նրա համար, աւելացրած վրան այն բանւորական աշխատանքը, որ թափւել է այդ առարկան պատրաստելու համար:

Հ. — Ներկայումս առևտրի աշխատանքն ո՞ւմ գրպանն է մտնում:

Պ. — Այժմեան առևտրի աշխատանքը մնում է միջնորդին, կամ աւելի երիշտ մի շարք միջնորդների, որոնք տեղաւորուել են աշխատաւորի, արդիւնարերողի և սպառողի մէջ:

Հ. — Մի՞թէ կօօպերացիայի սիստեմով աշխատանքը բոլորովին գոյութիւն չունի:

Պ. — Կօօպերացիայի սիստեմով սպառողը միաժամանակ և վաճառող է ներկայանում. այդ պատճառով և նա իւր գործածութեան արտաբերութիւնները ստանում է իրենց իսկական արժէքով, մանաւանդ երբ նա ինքը կօ-

պերատիւ ընկերութեան միջոցով է յանձնարարում պատրաստել:

Հ. — Օրինակներ բերէք:

Պ. — Կօօպերատիւ հացախանութն ինքն է պատրաստում իւր հացը: Ընթացիք դնով նա առնում է ալիւր, թթիւնոր, աղ, վաչա կամ ածուխ, հաց թխելու համար՝ հացթուխին անհրաժեշտ ռոտիկն է վճարում, վճարում է հացափաճառին և այլն: Այս բոլոր ծախքերն ի նկատի ունենալով, եթէ հացի կիրառամն (մօտ 2<sup>1/2</sup> ֆունտ) արժենում է 22 սանտիմ (մէկ ֆրանկն ունի 100 սանտիմ), ապա կօօպերատորն ևս 22 սանտիմից աւելի չի վճարի և այն աւելորդ աշխատանքը՝ օգուտը, որով իր գոյութիւնը պահում է հացթուխ վաճառականը, ջնջւում է:

Հ. — Եթէ Կօօպերատիւ ընկերութիւնների մէջ ջնջւում է օգուտ առաւարտ, ապա այդ ընկերութիւններում ի՞նչպէս են խօսում օգտի բաշխման մասին:

Պ. — Օգուտ բառը այսպիսով բոլորովին երիշտ չէ գործ ածւում: Եթէ ևս 25 սանտիմ եմ վճարում հացի ժետոն (մարկ) գնելու համար և տարեկան շրջանառութիւնից չետոյ գործածած, հացի համար 3 սանտիմ չեա եմ ստանում, ապա իսկապէս ստած այդ 3 սանտիմը ներկայացնում է ոչ թէ օգուտ, այլ միմիայն մի տեսակ յաւելումն:

1008  
3713993



- Հ. — Իւրաքանչիւր սպառողի տարւայ ընթացքում, սրբան օգուտ կամ յաւելումն է մնում:
- Պ. — Այդ օգուտը շատ փոփոխական է. Անգլիայում, տարւայ ընթացքում, այն հասնում է 100 ֆրանկի, կամ կազմում է մի ամսական ռոնիկ:
- Հ. — Բելգիայի նման երկրում ինչի՞ կարող է հասնել, միջնորդ վաճառականների, տարեկան միջին արդիւնքը:
- Պ. — Այդ օգուտը տարեկան պէտք է հասնի ամենաքիչը 300 միլլիոնի, չհաշուած նրանց սարք ու կարգը և շուսյութեան ծախքերը:
- Հ. — Այդ ի՞նչպէս էք հաշուում:
- Պ. — Ես հաշուում եմ ամեն բնտանիքի տարեկան միջին ծախքը 800 ֆրանկ: Միջնորդների սովորական միջին եկամուտը հարիւրին 25-ից պակաս չի լինում. այսպէս իւրաքանչիւր բնտանիքից նրանք օգուտ են վերցնում 200 ֆրանկ, իսկ մէկ և կէս միլլիոն բնտանիքից — 300 միլլիոն ֆրանկ:
- Հ. — Էլ ի՞նչ նիւթական օգուտներ են բերում կոօպերացիաները իրենց անդամներին:
- Պ. — Այդ օգուտներից մէկն է և հիւանդութեան դէպքում հասցրած օգնութիւնը, բժիշկի, դեղի, հացի, այս բոլորը ձրի՝ հաշուելով կոօպերատիւ ընդհանուր ծախքերի մէջ: Այս բոլորը չնչին վարձատրութեամբ արւում է և կոօպերատիւ անդամների կանանց և երեխաներին:
- Հ. — Գոյութիւն չունե՞ն այնպիսի կոօպերատիւ-

- ներ, որոնք իրենց անդամներին մատակարարէին և այլ նիւթական օգուտներ:
- Պ. — Ինչպէս չէ: Կան և այնպիսի կոօպերատիւներ, ինչպէս օրինակ «Վօօտիւի» Գան քաղաքում և «Պրոգրէս» Ժոլիմոն քաղաքում, որոնք իրենց ձերացած անդամներին կենսաթոշակ են տալիս:
- Հ. — Այդ կենսաթոշակները բոլորովին ձրի՞ են տրւում, առանց միւս անդամների վրայ հաշուելու:
- Պ. — Բոլորովին, առանց ծանրանալու ուրիշի վրայ: Միայն կոօպերատիւր պայման է դնում, որ կենսաթոշակ ստանալու իրաւունքով կարող են օգտւել այն անդամները, որոնք որոշ տարիքի են հասնում, որոշ ժամանակ կոօպերատիւին անդամ են լինում և ամեն տարի որոշ գումարից պակաս առւտուր չեն անում:
- Հ. — Այս բոլորը շատ լաւ է և հիանալի: Այսպիսի պայմաններում սպառողներն ընդհանրապէս, այսինքն մենք ի՞նչ պէտք է անենք:
- Պ. — Մենք բոլորս, որովհետեւ ամեն մարդ սպառող է, պէտք է մտնենք որեւէ սպառող կոօպերատիւ ընկերութեան մէջ, կամ, եթէ այդպիսին չկայ իւր համայնքի (շրջանի) մէջ, պէտք է միանանք և հիմնենք այդպիսի մի ընկերութիւն:
- Այդպէս վարւելով մենք կապացուցենք մեր զարգացած լինելը և միևնոյն ժամանակ դէպի մեր անձը և մեր բնտանիքի ապագան ունեցած հոգատարութիւնը:

ԵՐՐՈՐԳ ԳԱՍ

Կօօպերացիայի բարոյական առաւելութիւնները:

Հ. — Կօօպերացիայի նիւթական առաւելութիւններն անվիճելի են, բայց մի՞թէ դորանից աւելի նա ոչինչ չի տալիս:

Պ. — Ո՛չ, կօօպերացիան տալիս է և բարոյական առաւելութիւններ:

Հ. — Թուէք այդ առաւելութիւնները:

Պ. — Ամենից առաջ կօօպերատիւ ընկերութիւնը մի դպրոց է համերաշխութեան, փոխադարձ օգնութեան և ձգտում է ջնջելու մարդու մէջ եսականութիւնը:

Հ. — Ո՞րն է եսական մարդու (էգոիստի) նշանաբանը:

Պ. — Եսական մարդու նշանաբանն է. «Իւրաքանչիւրը իւր, իսկ Աստուած բոլորի համար»:

Հ. — Կօօպերատորի նշանաբանը ո՞րն է:

Պ. — Կօօպերատորի նշանաբանն է. «Բոլորը մէկի համար, մէկը բոլորի համար»:

Հ. — Համերաշխութիւն ասելով ի՞նչ պէտք է հասկանայ:

Պ. — Համերաշխութիւն նշանակում է. սէր դէպի մերձաւորը, նրան օգնելու ցանկութիւն, օգնել նրան, այդպիսով և իրաւունք ունենալ

կարիք եղած դէպքում իւր հերթին նրանից օգնութիւն ստանալ:

Հ. — Համերաշխութեան հետեանքները ո՞րոնք են:

Պ. — Համերաշխութիւնը մարդու աւելի զօրեղ է դարձնում և աւելի ինքնաւստահ, մարդուներշնչում է այն դիտակցութիւնը, թէ դժբախտութեան կամ տանջանքների ժամանակ նա լքուած, մենակ չի մնայ:

Հ. — Կօօպերացիան այլ ևս ի՞նչ բարոյական արժանիքներ ունի:

Պ. — Նա զարգացնում է ընտանեկան զգացմունքները մարդու մէջ:

Հ. — Ի՞նչպէս:

Պ. — Սովորաբար ոչ կօօպերատոր ամուսինը բոլորովին չի հետաքրքրում տնտեսական հոգսերով: Այդ բոլորը նա թողնում է կնոջ հոգացողութեանը: Սրանից հետեւում է այն, որ չիմանալով տնտեսական այդ կարիքները, մարդը տրամադիր է մտածելու, որ իւր այնքան դժւարութեամբ աշխատած գումարները կիներ շռայլում է, չի տնտեսում և այլն և այլն:

Հ. — Իրանից ի՞նչ է հետեւում:

Պ. — Բանւորի տանը յաճախ վէճեր են լինում այդ առթիւ, վերջապէս հայրը սկսում է խուսափել իւր օջախից, տան զլխաւորը սկսում է օղետուն դնալ և արբեցողութեամբ պարապել:

Հ. — Կօօպերացիան այս տխուր երևոյթները դէմ ի՞նչ միջոցներով կարող է կուել:

Պ. — Ամուսինը՝ տղամարդը, որ կօօպերատիւ միութեան անդամ է, վարժուում է հետաքրքրել տնտեսական կարիքներով: Նա ինքն է գնում կօօպերատիւի խանութը, կամ կնոջ ուղեկցութեամբ նա աչնտեղ սովորում է թէ ո՞րքան է նստում մի ընտանիք կերակրելը կամ ո՞րքան դժար է ապրել մի համեստ աշխատավարձով:

Հ. — Էլ ուրիշ ոչի՞նչ:

Պ. — Կօօպերացիան զարգացնում է մարդու մէջ և շրջահայեցողութիւնը:

Հ. — Բացատրէք այդ:

Պ. — Այն բաները, որ կօօպերացիայի անդամ է, միութեան գործերի ընթացքից վարժուում է տնտեսութեան: Նա զուր տեղը իւր աշխատանքը չի վատնում և մտածում է իւր անձի և իւր ընտանիքի մասին:

Հ. — Գորանով վերջանում է:

Պ. — Ի հարկէ ո՞չ: Կօօպերատորն այն ժամանակ նպաստում է ինքնօգնութեան միութիւններ կազմելու՝ հիւանդութիւնների, անգործութեան, անկարութեան դէմ և այլն:

Հ. — Կօօպերատիւներն իրենք, ոչ մի նախազգուշական միջոցներ ձեռք չեն առնում հիւանդութիւնների դէպքում կամ նրանց խնամատարութեան ժամանակ:

Պ. — Գոյութիւն ունեն բազմաթիւ կօօպերատիւ

ընկերութիւններ, որոնք իրենց հիւանդ անդամներին ձրի դեղեր են տալիս և բժշկական խնամք տանում նրանց վրայ: Կան և այնպիսիները, որոնք իրենց անդամի հիւանդութեան դէպքում, քանի նա անկարող է աշխատել, նրա ընտանիքին հաց են տալիս և սննդի համար անհրաժեշտ պէտքեր են մատակարարում:

Հ. — Իսկ կօօպերատորների կանայքն ու որդի՞քը:

Պ. — Որոշ թուով կօօպերատիւներ կազմակերպել են իրենց անդամների կանանց և երեխաների համար ևս բժշկական խնամատարութիւն և դեղեր են մատակարարել. այս բոլոր ծախքերը բաժանելով բոլոր անդամների վրայ՝ իւրաքանչիւրի վրայ հաշւելով շաբաթական մօտաւորապէս 5 սանտիմ:

Հ. — Սրանից ի՞նչ է հետևում:

Պ. — Սրա հետևանքն այն է լինում, որ չքաւորների մի ահագին թիւ, որոնք առաջ պիմում էին հասարակական բարեգործական հիմնարկութիւնների կամ մասնաւոր մարդկանց օգնութեան, այժմ կառավարում են առանց այդ դրսի օգնութեան. դրա կարիքը չեն զգում այն օրւանից, երբ իրենց սեփական բժիշկին ու դեղատունն ունին, որ պահուում են կօօպերատիւ միութեան շնորհիւ:

Հ. — Գորանով բանւորի արժանապատուութիւնը բարձրացան:

Պ. — Շատ հասկանալի է. քանի որ բարեգործու-

Թիւնը ստորացնում, նսեմացնում է այն մարդու արժանապատուութիւնը, որ դիմում է այդ միջոցին:

Հ. — Իսկ վաճառականները ապառիկ տալիս են իրենց սպառողներին, երբ նրանցից մէկն ու մէկը հիւանդանում է:

Պ. — Այո՛, սովորաբար տալիս են, բայց այդ շատ թանգ են արժեցնում նրանք բանւորին թէ նիւթական, թէ բարոյական տեսակէտից:

Հ. — Իսկ կօօպերատիւները ապառիկ տալիս են:

Պ. — Ո՛չ. միայն հազուադէպ բացառութիւնների ժամանակ և շատ լաւ է, որովհետեւ սովորաբար երբ ապրանքը ձեռք է բերւում ապառիկ, ապա մարդ տրամադրւում է աւելի հեշտութեամբ ծախսել այն և այդպիսով հեշտութեամբ խճճւում է պարտքերի մէջ և խանութպանի դերին դառնում \*):

\*) Կօօպերացիայի կանոնաւոր կառավարութեան համար անհրաժեշտ է միշտ ի նկատի ունենալ Բօչգելեան սկզբունքները. — 1. Սպառողական ընկերութեան բոլոր անդամները հաւասար իրաւունքներ են վայելում և իւրաքանչիւրը միայն մի ձայնի իրաւունք ունի. 2. Ընկերութեան պայերը պէտք է բարձր գին չունենան, որպէսզի հասարակութեան ամենախեղճ խաւերն անգամ կարողանան մասնակցել (կարելի է նշանակել 50 կոպէկից մինչև 3 կամ 5 ուրբլի և աւելի): 3. Ամեն մի անգամ սահմանակ թւով բաժիններ պէտք է ունենայ. 4. Առևտուրը պէտք է կատարւի միայն կանխիկ. 5. Ապրանքների գները պէտք է չափաւոր լինեն. 6. Օգուտը պէտք է բաժանւի ոչ թէ բաժինների համեմատ, այլ

Հ. — Կանխիկ փողով առևտուր անելը լաւ բան է:

Պ. — Ի հարկէ, քանի որ այն սպառողին ազատութիւն է տալիս և չի ստիպում նրան առանց այլևայլութեան ընդունել այնպիսի ապրանք, որոնց արժէքը սարսափելի բարձրացրած են լինում, իսկ որակը իջեցրած:

Հ. — Կրթական տեսակէտից կօօպերացիայի արդիւնքները որո՞նք են:

Պ. — Կօօպերացիան սպառողին ստիպում է մասնակցել խանութի կառավարութեանը, հետեւել դործի ընթացքին. նա վարժեցնում է սպառողին յաղթահարել շատ դժւարութիւնների, մի խօսքով նրան առևտրական և ֆինանսական որոշ վարդացումն է տալիս:

Հ. — Բոլորն ա՞յդ է:

Պ. — Կօօպերատիւ ընկերութիւնը սովորաբար իւր անդամների ժողովելու համար շէնք է ունենում: Այդ շէնքի մէջ կազմակերպւում են տօներ, զրոյցներ, որոնց ժամանակ կօօպերատորը դալիս է իւր ընտանիքով: Մտաւորական և բարոյական տեսակէտից այս երե-

սպառած ապրանքի քանակի համեմատ: 7. Ապրանքը պէտք է վաճառել ոչ միայն անդամներին, այլ և բոլոր ցանկացողներին և միատեսակ գնով:

Բացի այդ՝ պէտք է աշխատել սպառող ընկերութիւնների հաստատութիւններում աշխատանքը գնել օրինակելի հիմքերի վրայ:

ւոյթը նրա վրայ շատ բարերար ազդեցութիւն է անուծ:

Ն. — Կօօպերատիւները սահմանափակուած են միայն տօնական երեկոյթներ և զաստիօսութիւններ կազմակերպելով:

Պ. — Ո՛չ. սովորաբար նրանք ունենում են իրենց անդամների և նրանց ընտանիքների համար գրադարաններ: Նրանք չնչին վճարով կազմակերպում են խմբական ճանապարհորդութիւններ. այս ճանապարհորդութիւնները նպաստում են աշխատաւորների զարգացման և հեռու են պահում նրանց ստոր բաւականութիւններից:

Ն. — Այս բոլորից ի՞նչ եղբակացութեան էք գալիս:

Պ. — Իմ եղբակացութիւնը հետեւեալն է, որ այն ամենը, որոնք հետաքրքրուած են ժողովրդի բարոյական և մտաւոր զարգացմամբ, պարտական են նպաստել կօօպերատիւ շարժման և աշխատել, որ այն բարգաւաճի:

### ՉՈՐՈՐԴԻ ԳՍՍ

Կօօպերացիա կազմելու կանոնաւոր՝ օրինական ձևը:

Ն. — Ի՞նչ պէտք է անել կօօպերատիւ ընկերութիւն կազմելու համար:

Պ. — Օրէնքն ասում է. օրինական կերպով կօօպերատիւ ընկերութիւն կազմելու համար ամենապակասը հարկաւոր է 7 մարդու համաձայնութիւն:

Ն. — Յետո՞յ:

Պ. — Պէտք է որոշել ընկերութեան նպատակը, նրա գործունէութեան ձևը, ինչպէս և որոշել ընկերութեան դրամազլխի minimum (ամենանուազ չափը) և այն վճարները, որ պէտք է անել ընկերութեան իւրաքանչիւր անդամ:

Ն. — Անդամներից արժէ՞ մեծ անդամավճար պահանջել:

Պ. — Բոլորովին ոչ: Միանգամայն բաւական են 10 կամ 25 ֆրանկանոց պաշերը (բաժին), մանաւանդ որ սպառողները ապրանքը պէտք է կանխիկ վճարով գնեն. այսպիսով ընկերութիւնը կարող է իւր գործունէութիւնը սկսել առանց մեծ դրամազլխի, մանաւանդ եթէ հէնց սկզբից ուզում է զգուշութեամբ տանել գործը:

Ն. — Այս բոլորը հիմնողների համար. իսկ ի՞նչպէս պէտք է վարւին այն անդամները, որոնք

ապագայում կուղենան ընկերութեան մէջ  
մտնել:

Պ. — Ապագայում կօօպերացիայի մէջ մտնել ցան-  
կացողներին աւելի մեծ աւանդադրամ չպէտք  
է պահանջել: Նրանք ևս պէտք է տան այն-  
քան, որքան վճարել են ընկերութեան հիմնա-  
դիրները:

Հ. — Բայց այդ արդարացի՞ բան է. մանաւանդ  
երբ ընկերութիւնը մի քանի տարի գոյու-  
թիւն ունենալուց յետոյ, բաւական աչքի  
ընկնող առձեռն գումարի և գոյքի տէր է  
գառնում:

Պ. — Այդ արդարացի է, քանի որ կօօպերատիւի  
յաջող առաջադիմութեան համար անհրաժեշտ  
է ոչ այնքան մեծ դրամազուլս ունենալը,  
որքան շատ թուով սպառողներ:

Հ. — Բացատրէք այդ ինձ:

Պ. — Մեծ վաստակ ստանում են լաւ շրջանա-  
ռութիւն ունեցող հաստատութիւնները և ոչ  
թէ մեծ դրամազուլս ունեցողները:

Հ. — Ի՞նչպէս պէտք է բաժանել վաստակը. ըստ  
դրամազլսի՞, թէ հէնց սպառողների մէջ:

Պ. — Վաստակը պէտք է իսկապէս բաժանել  
սպառողների մէջ այն համեմատութեամբ, ինչ  
չափով նրանցից ամեն մէկը ապրանք է սպա-  
ռել:

Հ. — Ինչո՞ւ:

Պ. — Որովհետեւ օգուտը կամ վաստակը ոչ այլ  
ինչ է, եթէ ոչ գների այն զանազանութիւնը,

որ ստացւել է կօօպերատիւի մէջ առարկան  
գնելու և վաճառելու ժամանակ. հետեւապէս  
և իւրաքանչիւր սպառող չեա կստանայ կօ-  
պերատիւի մէջ իւր թողած յաւելումները:

Հ. — Ուրեմն պէ՞տք է խրախուսել, որ հնար եղա-  
ծին չափ կօօպերատիւի մէջ շատ մարդ մտնի:

Պ. — Այո, որովհետեւ կօօպերատիւի խանութի  
բազմաթիւ սպառողները միայն կարող են  
նպաստել ընկերութեան բարգաւաճմանը:

Հ. — Ապրանքն ի՞նչ գնով պէտք է վաճառել:

Պ. — Պէտք է վաճառել տեղական շուկայում  
գոյութիւն ունեցող գներով:

Հ. — Ինչո՞ւ չվաճառել իսկական արժէքով:

Պ. — Շուկայի գներով վաճառելով հնարաւորու-  
թիւն կլինի տարեկան շրջանառութիւններից  
յետոյ սպառողներին խոշոր վաստակ տալու,  
որով աշխատաւորների ընտանիքներն առանց  
զղալի զրկանքի, աննկատելի կերպով կկարո-  
ղան ան փոքրիկ գումար տնտեսել:

Հ. — Պէտք է արդեօք ստացւած բոլոր վաս-  
տակը բաժանել սպառողների մէջ:

Պ. — Ոչ, ընդհակառակը պէտք է պահեստի դրա-  
մազուլսը ժողովել և նրա եկամուտներով  
հիմնել հասարակական հաստատութիւններ,  
յօգուտ կօօպերատիւների բոլոր անդամների:

Հ. — Ի՞նչպէս պէտք է կառավարել կօօպերա-  
տիւ ընկերութիւնը:

Պ. — Կօօպերատիւ ընկերութիւնը պէտք է կա-  
ռավարել գեմոկրատիական՝ ժողովրդական

հիմունքներով, այսինքն՝ բոլոր անդամներից բաղկացած՝ ընդհանուր ժողովը կարող է հիմնական հարցերը վճռել, խորհուրդ կամ շանձնաժողով ընտրել, նրան լիազօրութիւն տալով ընկերութեան գործերը վարելու:

- Հ. — Կօօպերացիայի բանւորների և ծառայողների կազմը իւր ներկայացուցիչը չպէ՛տք է ունենայ վարչական խորհրդի մէջ:
- Պ. — Այդ խորհուրդն ամենից առաջ պէ՛տք է կօօպերատորների ժողովի արտայայտութիւնը լինի. բաց արդարացի է, որ բանւորներն ու ծառայողներն ևս իրենց ներկայացուցիչն ունենան, որ հարկ եղած դէպքում պաշտպանէ նրանց շահերն ու իրաւունքը:
- Հ. — Այս երեւոյթը չի՞ կարող վնասել գործի յաջող ընթացքին:
- Պ. — Ո՛չ ի հարկէ այն պայմանով, որ բանւորներն ու ծառայողները մեծամասնութիւն չկազմեն և հասկանան դէպի հաստատութիւնն ունեցած իրենց պարտաւորութիւնները: Այս պայմանն անհրաժեշտ է, որ կօօպերատիւ ընկերութիւնը կարողանայ առաջդիմել և բարգաւաճել:
- Հ. — Եղբակացութիւնը . . .
- Պ. — Եղբակացութիւնն այն է, որ կօօպերատիւ ընկերութիւնը լայն պէ՛տք է բաց լինի ամենի առաջ, և կառավարուի դեմոկրատիկ ոգով: Նրա գործունէութիւնը պէ՛տք է խիստ վերաստուգութեան ենթարկել. նա պէ՛տք է ունենայ գործունեայ և անձնուէր գործիչներ:

### ՀԻՆԳԵՐՈՐԳԻ ԳԱՍ

Կօօպերացիայի ապագան:

- Հ. — Կօօպերատիւ շարժումը մե՛ծ ապագայ ունի:
- Պ. — Անտարակոյս: Ընդհանրացած կօօպերատիւ շարժումը կարող է միանգամայն վերակազմել հասարակութիւնը:
- Հ. — Ի՞նչ մտքով:
- Պ. — Առեւտուրի մէջ օգուտ ասած բանը ջնջելու տեսակէտից, ինչպէս և փաստօրէն կապիտալիստական կազմը խորտակելու մտքով:
- Հ. — Կապիտալիզմի ոչնչացումից յետոյ կօօպերատիւ կազմի հիմունքը ո՞րը պէ՛տք է լինի:
- Պ. — Այդ արդէն կկոչւի սպառողի թագաւորութիւն. ստրուկ և հարստահարւող սպառողը իւր ներկայ դրութիւնից դուրս կգայ և կգառնայ իշխանաւոր:
- Հ. — Ի՞նչպէս:
- Պ. — Հասարակական ամբողջ կազմը կձեւակերպւի սպառողի շահերի տեսակէտից. սպառողը կգառնայ արդիւնաբերութեան տէր: Եւ որովհետեւ բոլոր մարդիկ էլ սպառող են, ապա ապագայ կօօպերատիւ կազմը իւր ձեւով ամենքին ևս կգոհացնի:
- Հ. — Յետո՞յ:
- Պ. — Ապա, տեղական այսպիսի սպառող ընկերութիւնը կմիանայ տեղական այլ ընկերու-

Թիւնների հետ և բոլորը միասին մի դաշնակցութիւն կկազմեն մեծածախս (օպտով) առևտուր անելու համար:

Ճ. — Յետո՞յ:

Պ. — Յետոյ այդ դաշնակցութիւնը կամ մեծածախս կօսպերատիւ խանութք, բոլոր միացած ընկերութիւնների համար անհրաժեշտ նիւթերը վնելու փոխարէն, ինքը կսկսի արդիւնաբերել, իրեն վերցնելով, կամ աւելի ճիշտ, իւր միացած ընկերութիւնների համար վերցնելով այն օգուտը, որ այժմ ստանում են զործարանատէրերն ու մասնաւոր արդիւնաբերողները:

Ճ. — Այլ ևս ոչի՞նչ:

Պ. — Ո՛չ, բոլոր ազգային կօսպերատիւ դաշնակցութիւններն ապագայում, իրենց հերթին կարող են միանալ իրեր փոխանակելու համար և այսպիսով իրականացնել կօսպերացիայի արտաբերելու և սպառելու ամբողջ սիստեմը: Այս դէպքում սպառողի իշխանութիւնը միանգամայն ապահովոււմ է և նա դառնում է իսկական տէր: Նա դորանով վերջ կդնի եսական կնոզին, որտեղ ամեն մէկն աշխատում է իւր մերձաւորին խաբել ու կողոպտել և ուրիշի հաշուին հարստանալ:

Ճ. — Այս բոլորը հիանալի, լաւ չափած ձևած է, բայց հնարաւոր բան է:

Պ. — Ինչո՞ւ է: Այժմ արդէն խոշոր դրամատէրերը մրցումը վերացնելու համար արտաբե-

րութիւնները կարգի դնող միութիւններ են կազմում: Նրանք մինչև անգամ միջազգային պայմանագրեր (տրիէստներ) են կնքում: Ինչո՞ւ համար չեն կարող նոյնն անել և մեծ ազգային կօսպերատիւ դաշնակցութիւնները:

Ճ. — Այն, ինչ որ դուք գուշակում էք, այժմ զոյութիւն ունի, թէկուզ իւր սկզբնաւորութեան սաղմի մէջ:

Պ. — Անկասկած զոյութիւն ունի:

Ճ. — Օրինակներ բերէք:

Պ. — Շատ տարիներից ի վեր արդէն անդլիական և շոտլանդական կօսպերատիւները միացել են օպտով ապրանք վնելու համար. չետոյ նրանք սկսեցին իրենք ապրանք պատրաստել, այդպիսով այժմ նրանք ունեն մրդի, կանաչեղէնի և կոնսերւների զործարաններ, կօսպերատիւ ջրաղացներ, ջուլհականոցներ, ոստայնանկութեան, կօշկեղէնի զործարաններ և այլն և այլն:

Ճ. — Իրա նման օրինակներ էլի կան, թէ ոչ:

Պ. — Այո՛, այժմ ամեն, քիչ թէ շատ քաղաքակիրթ պետութեան մէջ ևս կան կօսպերատիւ, օպտով առևտուր անող խանութներ, ինչպէս Մրանսիայում, Շւէյցարիայում, Աւստրիայում, Գերմանիայում, Բելգիայում և մինչև իսկ Ռուսաստանում:

Ճ. — Իսկ այդ օպտով խանութները բարգաւաճում են, յաջողութիւն ունի՞ն:

Պ. — Շատ յաջող, չնայած որ նրանք շատ ժա-

մանակ չէ ինչ բացել են, նրանց տարեկան շրջանառութիւնը հասնում է մէկ միլլիարդի:

Ճ. — Ուրեմն նրանք կարեօր նշանակութիւն ունեն:

Պ. — Ի հարկէ: Օրինակի համար համբուրգում դեռ 1894 թւին հիմնւած օպտով խանութը խիստ աչքի ընկնող տարեկան շրջանառութիւն ունի: Այսպէս նա անմիջական յարաբերութիւն ունի ամերիկական նաւթային տրէստի (միութեան) հետ, գերմանական շաքարի և սպիրտովաձառանների միութիւնների հետ \*), Մանչեստրում եղած կօօպերատիւ թէյի խանութի հետ, շէշցարական պանիր պատրաստող կօօպերատիւ միութիւնների հետ, գերմանական արդիւնաբերող կօօպերատիւ միութիւններից գնում է ծխախոտ, սիգար, ալիւր, զանազան (կօլբասեղէն) երէշկիք և այլն:

Ճ. — Այս ձևով կարօղ է համաձայնութիւն հաստատուել ազգային կօօպերատիւ դաշնակցութիւնների (Ֆեդերացիաների) մէջ:

Պ. — Այո՛, և այդպիսի համաձայնութիւնը ամենալաւ արդիւնքը կը տայ: Ի միջի այլոց պէտք է ասել, որ գործն արդէն չաջող ընթացք է

\*) Օղեվաձառումն ստորացնում է կօօպերացիայի դաղափարը, ուստի մեր նոր բացելիք սպառող ընկերութիւնները պէտք է հետու լինին այդ տեսակ ապրանքից:

ստանում Միջազգային կօօպերատիւ միութեան շնորհիւ:

Ճ. — Այդպիսի մեծ արդիւնաբերող դաշնակցութիւն կազմելու համար խոշոր դրամազլխի պակասութիւն չի՞ դզացւի:

Պ. — Ո՛չ. կօօպերացիան հեշտացնում է տնտեսութիւնը, բացի այդ աշխատաւոր մասսաները խնայողական դրամարկղներում միլլիարդներ են ունենում, որ կարելի էր աւելի շահեցնել, եթէ գործածւէր կօօպերատիւ ձեռնարկութիւններում:

Ճ. — Այդ կարելի՞ է անել:

Պ. — Ինչո՞ւ չէ. կամաց-կամաց մասսաները տնտեսական դաստիարակութիւն են ստանում և այն օրը, երբ նրանք կհասկանան իրենց խկական օգոստը, կօօպերացիաների շնորհիւ հարաւոր կլինի հրաշքներ գործել:

Ճ. — Սոցիալական բեֆորմների՝ բարեփոխութիւնների տեսակէտից ի՞նչ կարող է անել կօօպերացիան:

Պ. — Աշխատաւորների պահանջած բարեփոխութիւնների համար կօօպերատիւ սպառող միութիւնը կարող է ամենայաջող միջավայրը համարել:

Ճ. — Ի՞նչպէս:

Պ. — Այդ բարեփոխութիւնները գործադրելով, շատ սոցիալական կօօպերատիւներ իրենց ընկերութիւններում կիրականացնեն ութթամեայ բանուորական օրը:

Հ. — Յետոյ:

Պ. — Յետոյ, նրանցում աշխատավարձը սովորականից աւելի է, նրանք ամեն տարի իրենց աշխատաւորներին 8—15 օրեայ արձակուրդ են տալիս, առանց ռոճիկից զրկելու, նրանք իրենց Հիւանդ բանւորներին կամ ծառայողներին տալիս են կէս ռոճիկ, նրանց ապահովում են կենսաթոշակով և այլն և այլն:

Հ. — Ի՞նչ է ապացուցում այդ:

Պ. — Այդ ապացուցում է այն, որ աշխատաւորների համար կարելի է, գոնէ նւագադոյն, բարեկեցիկ վիճակ ստեղծել, միեւնոյն ժամանակ սպառողներին աժան գնով ապրանք մատակարարել: Այս ապացուցում է, որ եթէ կօօպերացիայի գաղափարն ընդհանրանայ, իւր սահմանների մէջ առնելով ամբողջ տնտեսական կեանքը, ապա չքաւորութիւնը կվերանայ և բոլորի կեանքի պայմանները կփոխեն դէպի լաւը, որ իւր հերթին նոր բարելաւութիւններ կստեղծի:

Հ. — Ուրեմն ընդհանրացած կօօպերացիան, լուրջ կերպով կարո՞ղ է նպաստել գոյութիւն ունեցող հասարակական կազմի բարելաւութեան:

Պ. — Սնկասկած:

Հ. — Կարո՞ղ ենք այդ կեանքի վերակազմութիւնն արագ կատարել:

Պ. — Եթէ ի նկատի առնենք գոյութիւն ունեցող կօօպերատիւ շարժման ոչժն ու զօրութիւնը, եթէ ի նկատի ունենանք, որ այդ շարժումը

միայն վերջին 25 տարւայ ընթացքում արդէն շատ ազդերի մէջ արմատ է բռնել, ապա հնարաւոր է եզրակացնել, որ դարձեալ մի բառորդ դար, և հասարակական կազմի մէջ հսկայական բարեփոխութիւն մտած կլինի, ի հարկէ եթէ այդ ուղղութեամբ ամեն տեղ յօդուտ կօօպերացիայի գաղափարների տեսական և դործնական պրօպօզանդ կմղուի:

Հ. — Կօօպերացիաներն ունե՞ն արդեօք իրենց երդւեալ թշնամիները:

Պ. — Ունեն. բայց այդ հակառակորդներն օրէցօր թուլանում են: Նրանք իրենց գաղափարները քարոզում են միայն անապատներում:

Հ. — Օրինակներ բերէք:

Պ. — Բուրժուա տնտեսագէտները սկզբում սկսեցին քննադատել կօօպերացիայի սխտեմը, չատարարեցին, որ նա անզօր կլինի իւր գոյութիւնը շարունակել. իսկ այժմ նրանք հակառակն են խոստովանում:

Հ. — Բոլորը:

Պ. — Համարեա բոլորը, նոյն իսկ Լերուա-Բոլիէ, որ չայտնի է կապիտալիզմի իբր արտօնեալ պաշտպան:

Հ. — Ուրիշներն է՞լ կան:

Պ. — Այո: Այսպէս օրինակ կաթոլիկ շիօլայի տնտեսագէտներից մէկը Կլադիօ-Ժանէ դրում է, որ կօօպերացիան, «XIX-րդ դարի միակ և ամենաչաշոյ սոցիալական փորձն (էքսպերիմենտ) է»:

- Հ. — Իսկ վաճառականները կօսպերացիային հա-  
կառակ են:
- Պ. — Օ, նրանք Հիանալի կերպով կարողացան  
կարգի դնել իրենց գործերը, կօսպերացիայի  
դէմ կռիւ յայտարարելով:
- Հ. — Ի՞նչ պէտք:
- Պ. — Հէնց այն պարզ պատճառով, որ նրանք  
իրենք իրար մէջ սկսեցին կօսպերացիոններ  
կազմել:
- Հ. — Ի՞նչ կօսպերացիաներ:
- Պ. — Հացավաճառները, խօզէլիները միութիւն  
կազմեցին, որ միացած հաց արտադրեն: Նրանք  
սկսեցին խմոր հունցող մեքենաներ գործա-  
ծել, կատարելագործւած փռեր պատրաս-  
տել և ալլն և ալլն: Նրանք դադարեցին սո-  
վորական կերպով հաց պատրաստելու ձեւից  
և դարձան այդպիսով միայն հաց վաճառողներ:
- Հ. — Նման օրինակներ ալլևս չկան:
- Պ. — Կան և մինչև անգամ շատ բազմաթիւ:  
Տրակտիր պահողները միանում են կօսպերա-  
տիւ տրակտիր բանալու համար, օղեղործներն  
ու զինեղործները միանում են միացած ու-  
ժերով խմիչքներ պատրաստելու համար, բո-  
կալէյնի առևտրականները միանում են ընդ-  
հանուր առևտրի համար և ալլն և ալլն \*):

\*) Առևտրականների միութեան դէմ, ի միջի այլոց,  
պէտք է միանան իրար հետ բոլոր սպառողական ընկե-  
րութիւնները. մեծ գործով ու մեծ առևտրով կարելի կլի-  
նի մրցել նրանց հետ:

Ծանօթ. հրատ.

- Հ. — Ուրեմն կօսպերացիան ամեն տեղ յաղթա-  
նակում է:
- Պ. — Կօսպերացիան ամեն տեղ, ամեն երկրում  
ևս կյաղթանակէր, եթէ այդ կառավարու-  
թիւնները կամենային:
- Հ. — Նրանք դրա համար ի՞նչ պէտք է անեն:
- Պ. — Եթէ կառավարութիւնները կօսպերացիայի  
միջոցով կամենային օգնել հասարակութեան  
կազմի բարեկարգութեանը, նրանք ճիշտ որ  
պէտք է աշխատէին այդ ուղղութեամբ, իրենց  
ամբողջ կարողութիւնը չխնայելով այդ մեծ  
զազափարական գործի համար:
- Հ. — Ի՞նչ պէտք:
- Պ. — Ամենից առաջ նրանք պէտք է հետևէին  
Փրանսիայի օրինակին, որ զինուորական նա-  
խարարի ձեռներէցութեամբ զօրանոցներում  
հիմնեց բազմաթիւ սպառող կօսպերացիաներ:
- Հ. — Եւ այդ յաջողութե՞ց:
- Պ. — Հիանալի կերպով. հարիւր հազարաւոր  
շտաբ և օբեր օֆիցերներ, ունտեր օֆիցերներ  
և Փրանսիական զինուորներ կան, որոնք զօ-  
րանոցներում հիմնւած կօսպերատիւ խմբե-  
րին մասնակցում են: Սովորական կեանքում  
ևս նրանք ի հարկէ ահաղին դարկ պէտք է  
տան կօսպերատիւ շարժման:
- Հ. — Ալլ ևս ուրիշ միջոց չկայ պրոպոզանդի  
համար:
- Պ. — Կայ. ժողովրդական լուսաւորութեան նա-  
խարարը կարող էր տարրական դպրոցներում

բանալ կօօպերացիայի կուրսեր ուսուցիչների համար: Այդ ուսուցիչները պաշտօն ստանալով, իրենց համայնքներում և ծառայութեան տեղերում պէտք է աշխատեն տարածել կօօպերացիայի գաղափարը, և նպաստեն սպառող, արդիւնաբերող, վարկի, առևտրական, կաթնատնտեսական և այլն և այլն ընկերութիւններ հիմնելու:

Ճ. — Եւ նրանից յետոյ ի՞նչ:

Պ. — Այն ժամանակ երկրի բոլոր համայնքներում ևս կօօպերատիւներ կազմելու համար այնքան երկար ժամանակ սպասելու կարիք չէր լինի: Այդ կօօպերատիւները միանալով կկազմեն դաշնակցութիւններ, և անմիջապէս հսկայական փոփոխութիւն կմտցնեն երկրի տնտեսական դրութեան մէջ:

Ճ. — Այդ դէպքում ի՞նչ է բոլոր բարեմիտ մարդկանց պարտականութիւնը:

Պ. — Բոլոր բարեմիտ մարդկանց պարտաւորութիւնն է անմիջապէս կօօպերատիւ ընկերութեան անդամ դրել կամ այդպիսի ընկերութիւն կազմել. օգնել, որ տեղական ընկերութիւնը միանայ ազգային Դաշնակցական կօօպերատիւ միութեանը, իսկ ազգային Դաշնակցականը՝ միջազգային կօօպերատիւ միութեան:

Ճ. — Նման կօօպերատիւ կազմակերպութեան վերջնական արդիւնքն ի՞նչ կլինի:

Պ. — Արդիւնքն այն կլինի, որ բոլորի համար կհանքը կաժանանայ և աւելորդ ու անօգուտ միջնորդները կվերանան: Դրամատէրի դերն ու նրանց ստացած օգուտը կիջնի ամենանւաղ չափի: Կատարեալ կօօպերացիան աշխարհին արդարութիւն, բախտաւորութիւն և համարձակութիւն կտայ:

Ճ. — Այդ դէպքում դուք ի՞նչ պէտք է անէք:

Պ. — Ես, հէնց այսօրուանից, առանց դադար առնելու պէտք է աշխատեմ նպաստելու, որ բարգաւաճի մեր կօօպերատիւ միութիւնը: Ես իմ դործակից ընկերներին մէջ պէտք է տարածեմ այս բարերար գաղափարը: Ամեն շանք պէտք է դործ գնեմ, որ կօօպերատիւ շարժումը աճի և այդպիսով բոլորին ևս պատիւ և բախտաւորութիւն բերի:

Ճ. — Կօօպերացիայի համար պրոպոզանդի ամենալաւ ձևը ո՞րն է:

Պ. — Միջոցն այն է, որ այս և սրա նման այն գրքոյկները (բրօշուրները) տարածել, որոնց մէջ կօօպերացիայի գաղափարն է քարոզուում: Յետոյ պէտք է կարդալ և ուրիշներին ևս ստիպել կարդալ կօօպերատիւ ամսագրեր և շաբաթաթերթեր, յօդւածներ և զրքեր, որոնց մէջ խօսուում է կօօպերատիւ մասին \*):

\*) Խորհուրդ ենք տալիս կարդալ թարգմանել կօօպերացիայի ամենալաւ ուսումնասիրողներից մէկի և մոլեկանդ պաշտպանի, պ. Տոտովեանցի բոլոր գրքերը:

Ն. — Դուք այդ կանէք:

Պ. — Երդուում եմ, որ կանեմ. երդուում եմ, որովհետև այդ բանում շահագրգռւած եմ ես ինքս, իմ կինս, իմ երեխաներս և այն աշխատաւոր դասակարգը, որին ես պատկանում եմ:

## ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Այս գրքոյկին մեր կողմից մի քանի խօսք աւելացրինք:

Երկրի արդիւնաբերոյ ոյժերի առաջ քաշելը, ազգաբնակութեան մասսաների մտաւոր և կրթական մակերևոյթի բարձրացնելը, նորա բարեկեցութիւնն ապահովելը, ահա այն հերթական հարցերը, որ պէտք է մեր ուշադրութիւնը գրաւեն. սրանք այնպիսի հարցեր են, որոնք արմատապէս կ'թարմացնեն ու կ'բուժեն հասարակութիւնը:

Վերջին տարիները, ժողովրդի առանց այն էլ շլատուած ոյժերն աւելի քայքայւեցին և թուլացան: Մենք աւելի եռանդ և ճիգ պէտք է գործ դնենք ստեղծագործոյ ու շինարար գործունէութիւն սկսենք, որպէս զի կարողանանք վերականգնել մեր ունեցած կորուստը: Պէտք է բոլոր զիտակից ոյժերը միանան զիւղացիներին ու քաղաքացիներին կազմակերպելու համար:

Միայն ազգաբնակութեան, մանաւանդ զիւղական, երկրագործ ազգաբնակութեան բազմակողմանի ու խմորոյ գործունէութիւնը կարող է գրա-

ւական լինել երկրի ոյժերի բեղմնաւոր վերածնու-  
թեան:

Միւսնոյն տեղում ապրող բնակչութեան, դա-  
նազան խմբերի, տնտեսական շահերը ոչ միայն  
միանման չեն լինում, այլ և յանախ հակասում են  
իրար:

Միամտութիւն կլինէր սպասել, որ ժողովրդի  
որևէ իշխող դասակարգ չօղբենայ օգտւել իւր  
ունեցած առանձնաշնորհումներից և իւր շահերը  
դո՛հի յօգուտ ուրիշ դասակարգի շահերի:

Կեանքն ու դիտողութիւնը բաւական համո-  
ղեցուցիչ կերպով ապացուցանում են այն, որ դա-  
սակարգերն իշխում են իրար վրայ ոչ թէ իրենց  
թւական քանակութեամբ, այլ տնտեսական և  
կուլտուրական ուժով:

Մանր հողատէրերը և առհասարակ զիւղա-  
ցիութիւնը, ինչպէս որ մեղանում է, ունին իրենց  
առանձնայատուկ տնտեսական պահանջները, որոնց  
բարեյաշող լուծումից է կախւած նրանց բարե-  
կեցութիւնն ու հաստատութիւնը: Նրանք իրենց  
արդիւնաբերութեամբ միայն կարող են իրենց հա-  
մար տնտեսական անկախութիւն ստեղծել:

Մանր գործատէրը, որ ապրում է միայն իւր  
սեփական ուժերով, անպայման ենթարկւում է և  
ստրկանում հսկայական դրամական ուժին՝ կապի-  
տալին:

Հարկաւոր է դիտութեան յայն պաշար, նրբա-  
զգացութիւն, ձեռներէցութիւն, փորձառութիւն,  
վերջապէս դրամադուլս է պահանջւում, որպէս զի

յաշողութեան յուսով մարդ կարողանայ ծրցու-  
թեան մէջ մտնել:

Այդ պատճառով, այն մանր հողատէրը, որ  
ծղտում է իւր տնտեսական անկախութիւնն ապա-  
հովել, որ չի ցանկանում խոշոր և ձեռներէց դրա-  
մատիրոջ հլու հարկատուն դառնալ, պէտք է զինւի  
ժամանակակից բոլոր կատարելագործւած միջոց-  
ներով, որոնցով օժտւած են բոլոր տնտեսութիւն-  
ները:

Ամեն մէկի համար առանձին, այս անհասա-  
նելի բան է: Գոյութեան ընդհանուր կուլի յաղ-  
թանակն ապահովող ոյժը, որով բնորոշւում է աշ-  
խատաւորների ներկայ տնտեսական դրութիւնը,  
կարելի է գտնել միմիայն միութեան մէջ:

Այսպիսի կապով գործօն կարող է լինել զեմ-  
ստուն, մանր զեմստւոյական միութիւնը, եթէ  
միայն նրանց զեկը լինի մանր աշխատաւոր զիւ-  
ղացիութեան ձեռքին:

Միայն այս դէպքում աշխատաւոր մասսանե-  
րի տնտեսապէս միանալու խնդիրը կարելի էր թող-  
նել զեմստւոյական կաղմակերպութիւններին \*):  
Բայց մեղանում դեռ զեմստւո անգամ չկայ: Իսկ  
Ռուսաստանում գոյութիւն ունեցող զեմստւօն իւր  
սահմանափակ իրաւունքներով հազիւ թէ կարողա-  
նայ կուլակների դէմ կուլել: Ինչպէս վարկի, այն-

\*) «Ձանգ» շաբաթաթերթի № 1 «Զրոյցներ զեմ-  
ստուցի մասին» և մեր գիրքը «Ժողով. առողջապահու-  
թիւն»:

պէս և փոխարինութեան շրջանում մանր աշխատաւորական արդիւնաբերութիւնը համաշխարհային շուկայի հետ կապուած է ամբողջ մի շարք միջնորդներով ու ձեռնարկողներով:

Հէնց այդ միջնորդների շնորհիւ ևս նա հարստահարուում է, նա կորցնում է իւր անկախութիւնը: Ուրիշ խօսքով մանր տնտեսութիւնների հարստահարութեամբ ապրում է գիւղական մի ամբողջ դասակարգ՝ կուլակներ, միջնորդներ, վաճառականներ և այլն:

Նրանց գոյութիւնն ամենասերտ կերպով կապուած է հէնց մանր տնտեսութեան ենթարկւող ու ստորացող դերի հետ:

Օգուտը աւելանում է հէնց նրանով, որ այդ բոլոր աւելորդ միջնորդները վերանում են մէջ տեղից, իսկ ապրանքի փոխարինութիւնը կատարուում է ամենախելօք և կանոնաւոր հիմունքներով:

Այսպիսով ձեռք բերւած խնայողութիւնը կաւելացնի տնտեսութեան եկամուտը:

Այդ պատճառով ինքնուրոյն մանր աշխատաւորի շահերը միանգամայն հակասում են նրա շուրջը վխտող միջնորդների շահերին:

Մինչդեռ այդ դասակարգը իւր սոցիալական ազդեցութեամբ, իւր զարգացմամբ և ձեռներէցութեամբ յանախ շատ բարձր է լինում կանգնած տեղական աշխատաւոր դասակարգից:

Պարզ է, որ այդ աշխատաւոր գիւղացիութիւնը նրանից ոչ մի օգնութիւն սպասել չի կարող իւր տնտեսական գրութիւնը բարձրացնելու և

վերացնելու համար իւր միջից վաշխառութիւնն ու միջնորդներին:

Մեր ապագայ դեմստւօն շատ բան կարող է անել, եթէ նրա վարչութեան մէջ իշխող դեր կատարեն աշխատաւոր տարրերը, պէտք է պատրաստել և այդ զեմսաւօյական գործունէութեան համար:

Տեղական ինքնավարութեան մէջ, որպէսզի կարողանայ աշխատաւոր դասակարգը իշխող տեղ գրաւել, անհրաժեշտ է, որ նա մտաւորապէս և կուլտուրապէս բարձրանայ ու որոշ հասարակական դիրք ստեղծի իւր համար: Իսկ մինչև այդ, ինքնօգնութիւնն ու փոխադարձ օգնութիւնը, այսինքն կօօպերացիան, գիւղացիութեան համար, նրա տնտեսական գրութիւնը բարձրացնելու ամենայարմար միջոցն է:

Կօօպերացիան իւր էութեամբ իսկապէս մի դպրոց է, որտեղ մասսաները վարժւում են հասարակական գործեր կատարելու:

Թէ կօօպերացիան ինչ մեծ նշանակութիւն ունի գիւղական տնտեսութեան համար, ամենևին ապացուցութեան կարիք չունի: Արեւմուտքում, յատկապէս Իանիայում նրա տւած արդիւնքը ակնյայտնի է. այդ աղքատ երկիրը կարճ ժամանակում կօօպերացիայի շնորհիւ հարստացաւ, և կուլտուրապէս բարձրացաւ:

Որպէս զի կօօպերացիան չաջողութիւն ունենայ, հարկաւոր է, որ այն ձեռնարկող մարդիկ հասկանան իրենց սեփական օգուտը: Կօօպերացիան

Թուլացնում է անհատական ձեռներէցութեան ոգին  
և զարգացնում է հասարակական շահի զարգացումը:

Աշխատաւոր զիւղացիութիւնը, ներկայ բո-  
ւական, դէպի երջանիկ ապագան տանող ճանա-  
պարհը կարող է գտնել միայն ինքնագործունէու-  
թեամբ, փոխադարձ օգնութեամբ և միութեամբ:

Կօօպերացիաները միշտ և ամեն տեղ սկսել և  
բարգաւաճել են հասարակութեան գիտակից տար-  
րերի մղած պրօպագանդայի շնորհիւ. միայն հար-  
կաւոր է կազմակերպել:

Թող «Բարեգործ. Ընկ.», «Կուլտուրական  
Միութիւնն» ու «Տնայնագործութեան Վարչու-  
թիւնը» երեք-չորս շաբաթեայ տեսական և գործ-  
նական դասընթացներ հիմնեն կօօպերացիայի վե-  
րաբերեալ — սա ևս նոր տիպի մի դպրոց է, սա  
հասարակական մի դպրոց կլինի:

Կօօպերացիայի յաջողութեան նպաստելը, այդ  
ընկերութիւնների գործունէութեան աչքի ընկնող  
երևոյթներից մէկը պէտք է լինի:

Դասընթացներից դատ, պէտք է հիմնել զիւ-  
ղական կօօպերացիաներին օգնող «կոմիտէ», որի  
նպատակը պէտք է լինի օգնել զիւղական կօօպե-  
րատիւններին ինչպէս խորհուրդներով, այնպէս և  
աշխատել նոր կօօպերացիաներ հիմնել զիւղերում  
ու քաղաքներում:

Կօօպերացիան կուսակցութիւն չէ ճանաչում:  
Այն բոլորը, որոնք աշխատանքի կողմնակից են,  
նրանք այս մասի մէջ ցանկալի գործիչներ են:

Այդ պատճառով վերին աստիճանի ցանկալի

կլինէր, եթէ գաւառներում աշխատաւոր զիւղա-  
ցիութեան ինքնագործունէութեան և տնտեսական  
ինքնօգնութեան համակրող երիտասարդութիւնը  
միանար և մի միութիւն կազմէր առանց կուսակ-  
ցութեան խտրութեան:

Նման միութիւնների նպատակը պէտք է լինի,  
իրենց կարողութիւնը ներածին չափ, պրօպագանդ  
մղել և զիւղացիութեան մէջ աշխատաւորների մի  
ամբողջական կօօպերացիա կազմել:

Կասկած չկայ, որ կօօպերացիայի զարգացումը  
զիւղերում շատ արագ և լայն չափերով կտարած-  
ւէր, եթէ մենք ունենայինք զիւղատնտեսներ կամ  
զիւղատնտեսական կրթութեամբ ուսուցիչներ:

Մեր առաջ դրուած է մի շատ լուրջ և կա-  
րևոր հարց՝ այդ զիւղատնտեսական ուսուցչական  
սեմինարիայի հարցն է:

Այդպիսի սեմինարիան անհրաժեշտ է, որտե-  
ղից զիւղատնտեսական կրթութիւն ստացած ու-  
սուցիչներ դուրս կգան մեր տարրական, ծխական  
և միջնակարգ դպրոցների համար:

Մարգարէ չպէտք է լինել գուշակելու համար,  
որ մեզանում, ինչպէս քաղաքներում այնպէս և  
զիւղերում կօօպերացիան բոլորովին այլ զոյն կու-  
նենայ, քան ստացել է այն, արևմուտքում. նա զգա-  
լի կերպով կթուլացնի մանր առևտուրը և ժողո-  
վրդին կվարժեցնի աւելի ուշագիւր լինել դէպի  
զիւղատնտեսական և առհասարակ տեխնիկական  
գիտութիւնները, որ աւելի նպաստաւոր կլինի մեզ  
համար:

Կօօպերացիայի մասին խօսելիս մենք զլիսաւորապէս ի նկատի ունենք զիւղը, որովհետեւ մեզանում զիւղացիութեան հարցի առաջ անպայման թուլանում, նսեմանում է բանւորական հարցը:

Կապիտալի և աշխատանքի մէջ եղած յարաբերութիւնը զիւղում պարզ կերպով որոշում է երկրի անտեսական զարգացման աստիճանը. նա միևնոյն ժամանակ որոշում է և կեանքի քաղաքական-հասարակական դրութիւնը:

Զանազան երկրներում այդ յարաբերութիւնները տարբեր ձևով են լինում:

Օրինակի համար, Գերմանիայում և Շւէյցարիայում երկու հոսանքներն ևս միանգամայն տարբեր ուղղութեամբ են դնում և եթէ երբ և իցէ նրանք մօտենում են իրար, այդ աւելի շուտ լինում է մի տեսակ թշնամական մերձեցում՝ քան բարեկամական:

Շւէյցարիայում քաղաքների սպառողներն իրենց կօօպերացիաներով ձգտում են աժան գնով ձեռք բերել միս, կաթ, իւղ, իսկ զիւղացիներն իրենց կօօպերացիաներով ամեն կերպ աշխատում են չիշեալ նիւթերի գները բարձրացնել:

Իտալիայում բոլորովին այլ բան ենք տեսնում. այստեղ քաղաքացիների և զիւղացիների կօօպերացիաները գնում են ձեռք-ձեռքի տուած՝ համերաշխ:

Քաղաքներում գոյութիւն ունեցող սպառողների միութիւններն իրենց ճիւղերն ունին զիւղերում, և հէնց այդ զիւղերի բաժանմունքները իրենց զիւղացի անդամների համար ներկայանում են

միաժամանակ և իբրև ապրանք սպառելու (վաճառելու) տեղեր:

Քաղաքներում գոյութիւն ունեցող ժողովրդական բանկերը գործում են և զիւղերում:

Առանձին, աւելի խոշոր կօօպերացիաներ քաղաքի և զիւղի շահերը միացնում են իրենց գործունէութեամբ. որ զլիսաւորն է, զիւղական և քաղաքի կօօպերացիաները միանում են և մէկ ընդհանուր ընկերութիւն կազմում:

Սյա երևոյթն ապացուցանում է, որ այստեղ շահերի հակառակութիւն չկայ:

Գիւղացին ու բանւորը, զիւղացի և քաղաքացի աշխատաւորը մեզանում հարազատ եղբայրներ են. նրանց շահերը կարելի է միայն արեւստական կերպով բաժանել իրարից:

Ի պատիւ բանւորների պէտք է շեշտել, որ Բագրի բանւորներն իրենց հայրենի զիւղերում նպաստում են դպրոցների բարգաւաճման և հասարակական շտեմարաններ հիմնելու գործին:

Մենք հաւատում ենք, որ մեր կօօպերացիան մի գորեղ միջոց կլինի քաղաքներում և զիւղերում աշխատաւորներին ի մի ձուլելու համար: Նարկաւոր է միայն, որ կօօպերացիայի բոլոր գործիչները զիտակցաբար ձգտեն ընդհանուր միութեան և ընդհանուրի շահերով համակուած լինին, անուշադիր թողնելով առանձին խմբերի դժուծ ու եսասէր սողոսկումները:

Տեստեսական շահերի միութեան ձգտման ժամանակ պէտք է վառել այն լուսաւոր ու թարմ

զիտակցութեամբ, որ բոլոր երկրներէ, ամեն տեսակի աշխատաւորներէ շահերն ևս միատեսակ են Բաժանիր, որ տիրես — ասում է խաւարի և բռնութեան դարաւոր փորձը, միացիր և յաղթանակիր, ասում է կօօպերատորին կեանքը՝ ամենօրեայ փորձը:

Թող կօօպերացիան լայն ծաւալւի, նա մեր թմրած — մեռած կեանքի համար լուսոյ մի աղբիւր կդառնայ:

Ժամանակակից կեանքի բնորոշ երևոյթներէց մէկն է կօօպերացիայի այդ լայն չափերով տարածելը, և կամաւոր միութիւնների այդ հոսանքը ամենագորեղ զէնքն է ներկայ մարդկութեան համար նրա գոյութեան կռւի մէջ:

Առհասարակ լայն ասպարէզ է բացուած մանր երկրագործ աշխատաւորների համար: Թող նրանք իրենց գործունէութիւնն սկսեն սպառողական խանութներով, որի հետ զուգընթացաբար հիմնեն վարկի ընկերութիւններ և շուլֆականոցներ:

Սպառողներ, միացէք, ձեր ձեռքն առէք ապրանքի փոխանակութիւնն, ապա և նրա արդիւնաբերութիւնը: Առաջին քալերը ծանր կլինեն, նպատակին մի անդամից չի կարելի հասնել, բայց որքան զիտակցաբար և կանոնաւոր գործէք, այնքան աւելի շուտ կհասնէք նրան և արմատն աւելի հիմնաւոր կլինի:

Զմոռանանք «Մէկը բոլորի համար, բոլորը մէկի համար»:



ԲԺ. Ա. Բ.

14. Վարիք և բարեգործութիւն . . . . .	15 կ.
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն .	15 »
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ . . .	15 »
17. Մարմնամարզութիւն (25 պատկերով) . . .	20 »
18. Առողջապահական նուէր նորատի կանանց .	20 »
19. Կինը և տղամարդը . . . . .	15 »
20. Վերաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »
21. Ինչ է կաշու հիւանդութիւնը . . . . .	15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն . . . . .	15 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին . . . . .	20 »
24. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի) . . .	20 »
25. Առամրսի կատարը . . . . .	20 »
26. Քուն և երագ (մի պատկերով) . . . . .	25 »
Մեծադիր պատկեր «Քուն և երագ» առանձին	10 »
27. Գործարան թէ երկրագործութիւն . . . . .	15 »
28. Սնապաշտութիւն ու կախարդութիւն . . .	20 »
29. Մտերմական խորհրդ. պատանիներին (օնանիզմ)	20 »
30. Գոյութեան կռիւ . . . . .	20 »
31. Ռուզյլի Վիրխով . . . . .	25 »
32. Սէր և խանդ (մի պատկերով) . . . . .	20 »
33. Անառակութիւն և պոռնկութիւն . . . . .	20 »
34. Նուէր հայ զինւորին . . . . .	20 »
35. Նուէր հայ վարժապետին (դպրոցական առողջապահութիւն): . . . . .	20 »
36. Նուէր հայ դպրոցականին (Մեր օրերը) . . .	10 »
37. Ութժամայ բանուորական օր (մի պատկ.) .	10 »
38. Ժողովրդական առողջապահութիւն (հիւանդացուցում և մահացութիւն) . . . . .	10 »
39. Երկու խօսք զիւզացուն . . . . .	10 »
40. Սով (մի պատկերով) . . . . .	10 »
41. Գաբաղ . . . . .	10 »
42. Գիւղատնտեսական ընկերութիւն . . . . .	10 »
43. Սպառողի հաւատամբը . . . . .	10 »

Պահեստը գտնուում է Ա. Պետերբուրգի, Վոլոզկե Սայկին փող. 4

ՀՀ Ազգային գրադարան



NL0205454

ПУШКИНСКАЯ СКОРОПЕЧАТНЯ  
С.-Петербургъ, Лештуковъ пер. 4

9122 E 10 407.